ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ XXXI ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

2010 թ. հուլիսի 4-ին Կոտայքի մարզի Աղվերան գյուղում գտնվող ՀՀ ԳԱԱ հանգստյան տանը տեղի ունեցավ Պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների խորհրդի հերթական՝ XXXI գիտական նստաշրջանը:

Գիտական նստաշրջանը բացեց ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Մելքոնյանը*: Իր խոսքում վերջինս մասնավորապես շեշտեց այն հանգամանքը, որ արդեն ավանդույթ է դարձել ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների արտագնա գիտական նստաշրջանների կազմակերպումը (XXVIII և XXIX գիտական նստաշրջանները տեղի են ունեցել Եղեգնաձորում, իսկ XXX հոբելյանականը՝ Աղվերանում 2009 թ. մայիսի 16-ին): Ա. Մելքոնյանը բեղմնավոր և հաջող ընթացք մաղթեց գիտաժողովի մասնակիցներին:*

Նստաշրջանի առաջին նիստը նախագահում էր ինստիտուտի փոխտնօրեն, պատմ. գիտ. թեկնածու Կարեն Խաչատրյանը*: Առաջին զեկուցումը ներկայացրեց ինստիտուտի Հին դարերի պատմության բաժնի աշխատակից* Ալիս Դումիկյանը*, որի զեկուցման թեման էր՝ «Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» երկի արժևորումը Վիկտոր Լանգլուայի աշխատություններում»: Մանրամասն ներկայացնելով Պատմահոր և նրա գլուխգործոցի վերաբերյալ ֆրանսիացի մեծանուն հայագետի դիրքորոշումը և տված գնահատականները՝ զեկուցողը մասնավորաբար ուշադրություն հրավիրեց այն իրողության վրա, որ, ի տարբերություն XIX դարի շատ եվրոպացի հայագետների, Վ. Լանգլուան Խորենացուն V դարից տեղափոխելու փորձեր չի կատարել:* Մարիամ Գրիգորյանը *«Բագրատունիների ծագման հարցի շուրջ» վերնագրված զեկուցման մեջ խմբավորված ներկայացրեց Բագրատունիների ծագման վերաբերյալ գոյություն ունեցող վարկածները՝ պաշտպանելով նախարարական տան տեղական ծագման տարբերակը, որի լավագույն հիմնավորողներից է հայ մեծանուն գիտնական Նիկողայոս Ադոնցը:* Լիանա Նազարյանի *զեկուցման թեման էր՝ «Տայքի ռազմաքաղաքական նշանակությունն ըստ վաղ միջնադարյան հայ պատմիչների»: Զեկուցման մեջ ի մի էին բերվել Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու, Սեբեոսի և այլ պատմիչների վկայությունները Տայքի աշխարհագրական դիրքի և ռազմաքաղաքական նշանակության վերաբերյալ:* Զոհրաբ Գևորգյանի *«Միջերկրածովյան առևտրի կազմակերպման եղանակները Կիլիկյան Հայաստանում XIII–XIV դդ.» զեկուցման մեջ սկզբնաղբյուրային հարուստ հենքի վրա հանգամանալի վերլուծության էր ենթարկվում XIII–XIV դդ. Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրային հարաբերություններում լայնորեն կիրառված բազմատեսակ գործարքները, փո-*

խառության տարբեր ձևերը, ինչպես նաև դրանց համար օգտագործված զանազան բնույթի փաստաթղթերը: Այդ պայմանագրերում արտացոլված են ժամանակի քաղաքակիրթ առևտուրը բնութագրող բազմաթիվ հատկանիշներ: Գործարքներում արված բավական խոշոր ներդրումները և դրանց իրագործման ուղղությունների աշխարհագրությունը, որն ընդգրկում էր գրեթե ամբողջ Միջերկրական ծովը, վկայում են կիլիկյան քաղաքներում տեղի ունեցած շահութաբեր առևտրի մասին:

Գիտաժողովի երկրորդ նիստը վարում էր ինստիտուտի գիտքարտուղար, պատմ. գիտ. թեկնածու Հակոբ Մուրադյանը*: Միջին դարերի բաժնի ասպիրանտ* Վահե Թորոսյանի *զեկուցումը նվիրված էր Սսի, Լոռիի և Անիի եկեղեցական ժողովներին վերաբերող որոշ հարցերի: Նույն բաժնի ասպիրանտ* Արմեն Վիրաբյանն *իր զեկուցման մեջ անդրադարձավ XVII դարի հայ նշանավոր պատմագիր Զաքարիա Քանաքեռցու կենսագրությանն առնչվող մի քանի տարբերվերի ճշգրտմանը: Նոր պատմության բաժնի ասպիրանտ* Հայկ Կարապետյանը *հակիրճ ներկայացրեց հայ ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչ, Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի դերը XVIII դարի առաջին տասնամյակների հայոց ազատամարտի կազմակերպման գործում: ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի (ՇՀՀԿ) աշխատակից* Արկադի Ակոպովը *«Օլթիի գավառի բնակավայրերի տեղագրությունը (XVI դ. – 1878 թ.)» զեկուցման մեջ անդրադարձավ օսմանյան տիրապետության շրջանում նշյալ գավառի գյուղերի տեղաբաշխմանն ու ժողովրդագրական պատկերին:*

Գիտաժողովի երրորդ նիստը վարում էր ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների խորհրդի նախագահ, պատմ. գիտ. թեկնածու Արտակ Մաղալյանը*: Նոր պատմության բաժնի աշխատակից* Հասմիկ Ամիրջանյանն *անդրադարձավ XIX դարի առաջին երեսնամյակում Լոռու գավառում կալվածատիրական հողատիրության իրավիճակին: Նույն բաժնի հայցորդ* Մանյա Նաջարյանի *զեկուցումը նվիրված էր Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովի գործունեությանը 1860–1863 թթ.: ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ աշխատակից* Գևորգ Այվազյանն *իր զեկուցման մեջ ներկայացրեց Ալեքսանդրապոլի բարեգործական - մշակութային ընկերությունների գործունեությունը 1860–1870-ական թվականներին: Իսկ Հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության բաժնի աշխատակից* Նարինե Երանոսյանի *զեկուցման թեման էր՝ «Եգիպտոսի արաբերեն պարբերականները 1882–1910-ական թթ.»: Նա հատկապես կարևորեց «Ալմուկթաթաֆ» գիտական ամսագրի 1909 թ. 35-րդ համարում տպագրված «Հայաստանը և հայերը» հոդվածը, ուր մանրամասն անդրադարձ է կատարված Հայաստանի պատմությանն ու աշխարհագրությանը:*

Գիտաժողովի եզրափակիչ՝ չորրորդ նիստը նախագահում էր ինստիտուտի տնօրեն Ա. Մելքոնյանը*: Նորագույն պատմության բաժնի աշխատակից* Համո Սուքիասյանը *հիմնականում առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվող փաստաթղթերի օգտագործմամբ ներկայացրեց «ՀՍԽՀ արտգործժողկոմատի տեղեկատու բաժնի գործունեությունը (1921 – 1922 թթ.)» զեկուցումը՝*

առանձնապես կանգ առնելով Տեղեկատու բաժնի աշխատանքի սկզբունքների, գործառույթների վրա: Նա մատնանշեց, որ բաժինը զբաղվում էր Խորհրդային Հայաստանի իշխանությունների համար տարաբնույթ տեղեկատվություններ, մամուլի տեսություններ պատրաստելով, ինչպես նաև սեփական պարբերականի («Բյուլետեն») հրատարակմամբ: Նույն բաժնի ասպիրանտ Արամ Մանուկյանն *իր զեկուցման մեջ նորովի անդրադարձավ Խորհրդային Հայաստանում միակուսակցական կառավարման համակարգի հաստատմանը: Մասնավորապես շեշտադրում էր կատարվում այդ գործընթացի վրա ազդած արտաքին (թուրքական) գործոնի վրա, որը, թեև վճռական չի եղել, բայց, այդուհանդերձ, որոշակի ազդեցություն է ունեցել հայ ազգային կուսակցությունների (հատկապես՝ ՀՅԴ) գործունեության կասեցման վրա: Եզրափակիչ զեկուցումը ներկայացրեց ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի հայցորդ* Վահե Սարգսյանը*: Նա անդրադարձավ ԽՍՀՄ փլուզմանը հաջորդող ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետություն–Վրաստան կրթամշակութային հարաբերություններին և այդ հարաբերությունների համատեքստում Ջավախքի խնդրին: Զեկուցողը մատնանշեց այն իրողությունը, որ կրթության ու մշակույթի ոլորտներում ստորագրված միջպետական պայմանագրերը հիմնականում մնացել են թղթի վրա, վրացական կողմից էական քայլեր չեն կատարվել Ջավախքի կրթամշակութային խնդիրների բարելավման տեսանկյունից:*

Զեկուցումների ավարտից հետո տեղի ունեցած քննարկման ժամանակ ելույթ ունեցան ինստիտուտի փոխտնօրեն, պատմ. գիտ. թեկնածու Կարեն Խաչատրյանը*, Հին դարերի պատմության բաժնի վարիչ, պատմ. գիտ. դոկտոր* Էդուարդ Դանիելյանը*, Միջին դարերի պատմության բաժնի վարիչ, պատմ. գիտ. թեկնածու* Արտաշես Շահնազարյանը*, Նոր պատմության բաժնի վարիչ, պատմ. գիտ. դոկտոր* Էմմա Կոստանդյանը*, Նորագույն պատմության բաժնի վարիչ, պատմ. գիտ. դոկտոր* Համլետ Հարությունյանը*, ինստիտուտի աշխատակիցներ՝ պատմ. գիտ. թեկնածուներ* Վահան Մելիքյանն *ու* Գասպար Կիրակոսյանը*: Նրանք ողջունեցին գիտական նստաշրջանի մասնակիցներին, անդրադարձան նաև զեկուցումների թեմատիկային:*

Գիտաժողովի վերջում ինստիտուտի տնօրեն Ա. Մելքոնյանն *ամփոփեց գիտական նստաշրջանի արդյունքները՝ դրվատանքի խոսքեր ուղղելով մասնակիցներին և տեղեկացրեց, որ ընթերցված լավագույն զեկուցումները կհրատարակվեն ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» տարեգրքի XI համարում:*

ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼՅԱՆ
ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ